ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

«Կերպարվեստ», «Երաժշտություն», «Ֆիզկուլտուրա», «Առողջ ապրելակերպ և անվտանգ կեսագործունեություն» առարկաների մեթոդական միավորման նիստի

Նիստը կայացել է 2026 թվականի օգոստոսի 25-ին:
Մասնակցողների թիվը՝ 13

Մասնակցողների անուն, ազգանուն

1. Մարգարիտա Հակոբջանյան
2. Լուսինե Հովհաննիսյան
3. Հայարփի Մինասյան
4. Արևիկ Խաչատրյան
5. Տատյանա Սարգսյան
6. Հասմիկ Հակոբյան
7. Հասմիկ Ավանեսյան
8. Սոնա Պողոսյան
9. Քնարիկ Խաչատրյան
10. Սուսաննա Գորգինյան
11. Արմինե Նիկողոսյան
12. Ալմաստ Մելքոնյան
13. Լուսինե Խաչատրյան

Օրակարգում՝

1. Մեթոդական միավորման նիստի օրակարգի ներկայացում (զեկուցող՝ ՄՄ ղեկավար Մ. Հակոբջանյան)
2. Մեթոդական միավորման ղեկավարի ներկայացում և քարտուղարի ընտրություն (զեկուցող՝ տնօրենի տեղակալ Լ. Մանվելյան)
3. «2026-2027 ուսումնական տարվա աշխատանքները կանոնակարգող իրավական ակտերում կատարված փոփոխությունների ներկայացում» (զեկուցող՝ տնօրենի տեղակալ Լ. Մանվելյան)
4. Դասալսումների քանակի և դասալսումների արձանագրությունների ձևաչափի կազմման հարցը (զեկուցող՝ տնօրենի տեղակալ կամ ՄՄ ղեկավար)
5. Ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխման և տնօրենին առաջարկության ներկայացման հարցը (զեկուցող՝ ՄՄ ղեկավար Մ. Հակոբջանյան)
6. ՄՄ անդամ ուսուցիչների կողմից դասի պլանի կազմման և ներկայացման ձևաչափի հարցը (զեկուցող՝ ՄՄ ղեկավար Մ. Հակոբջանյան, ՄՄ անդամներ)
7. ՄՄ ուսուցիչների կողմից գնահատման ձևերը ընտրելու և ամփոփիչ գնահատման (միավորային կամ բնութագրող) մեթոդների և հաճախականության ընտրության քննարկում և ՄԽ-ի հաստատման ներկայացման հարցը (զեկուցող՝ ՄՄ ղեկավար Մ. Հակոբջանյան, ՄՄ անդամներ)

Լսեցին՝

1. Մեթոդական միավորման ղեկավար Մ. Հակոբջանյանը ներկայացրեց մեթոդական միավորման հերթական նիստի օրակարգի նախագիծը՝ ներկայացնելով ընդգրկված հարցերը, զեկուցողներին և քննարկման հիմնական ուղղությունները: Նշվեց, որ օրակարգը կազմվել է՝ հիմք ընդունելով մեթոդական միավորման տարեկան աշխատանքային պլանը, ուսումնական գործընթացի կազմակերպման առաջնահերթությունները և ընթացիկ աշխատանքային խնդիրները:

Լսեցին՝

2. Տնօրենի տեղակալ Լ. Մանվելյանը տեղեկացրեց, որ մեթոդական միավորման աշխատանքների համակարգումը տնօրենի կողմից վերապահվել է ՄՄ անդամ ուսուցիչ Մարգարիտա Հակոբջանյանին: Միաժամանակ անդրադարձ կատարվեց ՄՄ քարտուղարի ընտրության հարցին՝ նշելով, որ քարտուղարն ապահովում է նիստերի արձանագրությունների վարումը, դրանց պատշաճ ձևակերպումն ու պահպանումը:

Ներկայացվեցին քարտուղարի հիմնական գործառույթները և դրանց իրականացման հետ կապված պահանջները: ՄՄ քարտուղարի թեկնածու առաջադրվեց Լ. Հովհաննիսյանը: Քննարկման ընթացքում անդրադարձ կատարվեց թեկնածուի կազմակերպչական հմտություններին և ՄՄ քարտուղարի գործառույթներն իրականացնելու պատրաստակամությանը: Կատարվեց բաց քվեարկություն: Քվեարկության արդյունքում 13 կողմ, 0 դեմ ձայներով ՄՄ քարտուղար ընտրվեց Լ. Հովհաննիսյանը:

Լսեցին՝

3. Տնօրենի տեղակալ Լ. Մանվելյանը մեթոդական միավորման անդամներին ներկայացրեց 2026–2027 ուսումնական տարվա ընթացքում ուսումնական գործընթացը կարգավորող իրավական և նորմատիվ փաստաթղթերի հիմնական պահանջները: Ներկայացման ընթացքում առանձնացվեցին հանրակրթության պետական չափորոշչին, ուսումնական ծրագրերին, գնահատման գործընթացին և ուսուցիչների մասնագիտական գործունեությանը վերաբերող դրույթները:

Առանձին անդրադարձ կատարվեց ուսուցիչների իրավունքներին, պարտականություններին և պատասխանատվությանը, ինչպես նաև իրավական պահանջների գործնական կիրառման հետ կապված հարցերին: Քննարկման ընթացքում մեթոդական միավորման անդամները բարձրացրեցին իրենց հետաքրքրող հարցերը, որոնց վերաբերյալ զեկուցողի կողմից տրվեցին համապատասխան պարզաբանումներ:

Ընդգծվեց ուսումնական գործընթացում իրավական պահանջների միասնական և հետևողական կիրառման անհրաժեշտությունը: Նշվեց նաև, որ իրավական դաշտում կատարվող փոփոխություններին տեղեկացված լինելու և դրանց պատշաճ կիրառումն ապահովելու նպատակով անհրաժեշտ է շարունակաբար հետևել գործող իրավական ակտերին և ուսուցիչներին հասանելի դարձնել համապատասխան իրավական ու մեթոդական նյութերը:

Քննարկման արդյունքում նախանշվեցին 2026–2027 ուսումնական տարվա ընթացքում իրավական ակտերի պահանջներին համապատասխան աշխատանքների կազմակերպման հիմնական ուղղությունները:

Լսեցին՝

4. Մասնախմբի ղեկավար Մ. Հակոբջանյանը ներկայացրեց ուսումնական տարվա ընթացքում դասալսումների կազմակերպման վերաբերյալ առաջարկությունները: Նշվեց, որ դասալսումների նպատակային և արդյունավետ իրականացումն ապահովելու համար անհրաժեշտ է նախապես հստակեցնել դրանց պարբերականությունը, յուրաքանչյուր ուսուցչի համար նախատեսվող նվազագույն քանակը և դիտարկման հիմնական չափանիշները:

Քննարկման ընթացքում անդրադարձ կատարվեց յուրաքանչյուր ուսուցչի համար ուսումնական տարվա ընթացքում իրականացվող դասալսումների նվազագույն քանակին, ինչպես նաև դասալսումների իրականացման կարգին, արդյունքների ամփոփման և ուսուցիչներին հետադարձ կապի տրամադրման մեխանիզմներին: Մասնախմբի անդամների առաջարկությունների հիման վրա ընդհանրացվեց դասալսումների արձանագրությունների միասնական ձևաչափ:

Լսեցին՝

5. Մասնախմբի ղեկավար Մ. Հակոբջանյանը ներկայացրեց ուսումնական պլանով նախատեսված դասաժամերի նախնական բաշխման նախագիծը՝ նշելով, որ բաշխման ընթացքում անհրաժեշտ է հաշվի առնել առարկայական ծրագրերի պահանջները, առկա ուսուցչական ռեսուրսները և դասարանների առանձնահատկությունները:

Քննարկվեց նախատեսված դասաժամերի ժամաքանակը և դրանց համապատասխանությունը ուսումնական ծրագրերի պահանջներին: Անդրադարձ կատարվեց նաև ուսուցիչների դասաբեռնվածությանը, առկա մասնագիտական ներուժին և դասարանների համակազմին:

Մասնախմբի անդամների կողմից ներկայացվեցին դասաժամերի առավել նպատակային և արդյունավետ բաշխման վերաբերյալ առաջարկություններ: Քննարկման արդյունքով ձևավորվեց մասնախմբի առաջարկությունը ըստ ստորև ներկայացված աղյուսակի.

Հհ	Անուն, ազգանուն	Առարկա	Դասարան	Ժամերի քանակ

1	Հասմիկ Հակոբյան	Ֆիզկուլտուրա	1Ա, 3Գ, 3Դ	6
2	Հասմիկ Ավանեսյան	Ֆիզկուլտուրա	1Բ	2
3	Սոնա Պողոսյան	Ֆիզկուլտուրա	2Ա, 2Բ	4
4	Քնարիկ Խաչատրյան	Ֆիզկուլտուրա	2Գ	2
5	Սուսաննա Գորգինյան	Ֆիզկուլտուրա	3Ա	2
6	Մարգարիտա Հակոբջանյան	Ֆիզկուլտուրա	3Բ	2
7	Արմինե Նիկողոսյան	Ֆիզկուլտուրա	4Ա	2
8	Ալմաստ Մելքոնյան	Ֆիզկուլտուրա	4Բ	2
9	Լուսինե Խաչատրյան	Ֆիզկուլտուրա	4Գ	2
10	Լուսինե Հովհաննիսյան	Երաժշտություն	1Ա, 1Բ, 2Ա, 2Բ, 2Գ, 3Ա, 3Բ, 3Գ, 3Դ, 4Ա, 4Բ, 4Գ, 4Դ , 5Ա, 5Բ, 5Գ, 6Ա, 6Բ, 6Գ , 7Ա, 7Բ, 7Գ, 8Ա, 8Բ, 8Գ, 9Ա	26
11	Հայարփի Մինասյան	Առողջ ապրելակերպ և անվտանգ կենսագործունեություն	5Ա, 5Բ, 5Գ	3
12	Հայարփի Մինասյան	Առողջ ապրելակերպ (խմբակ)	6Ա, 6Բ, 6Գ 7Ա, 7Բ, 7Գ	6
13	Արևիկ Խաչատրյան	Նկարչություն	1Ա, 1Բ, 2Ա, 2Բ, 2Գ, 3Ա, 3Բ, 3Գ, 3Դ, 4Ա, 4Բ, 4Գ, 4Դ , 5Ա, 5Բ, 5Գ, 6Ա, 6Բ, 6Գ , 7Ա, 7Բ, 7Գ, 9Ա	23
14	Տատյանա Սարգսյան	Նկարչություն	8Ա, 8Բ, 8Գ	3

Լսեցին՝

6. Առարկայական մասնախմբի ղեկավար Մ. Հակոբջանյանը ներկայացրեց դասի պլանների կազմման և ներկայացման միասնական մոտեցում սահմանելու առաջարկը՝ նշելով, որ այն կնպաստի դասերի նախապատրաստման գործընթացի համակարգմանը, ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների հստակեցմանը և ուսումնական գործընթացի առավել արդյունավետ կազմակերպմանը:

Քննարկվեցին դասի պլանի կառուցվածքին և բովանդակությանը ներկայացվող պահանջները, ինչպես նաև այն հիմնական բաղադրիչները, որոնք պետք է արտացոլվեն պլանում՝ դասի նպատակները, ակնկալվող վերջնարդյունքները, ուսուցման մեթոդներն ու գործունեությունները, գնահատման ձևերը և տնային առաջադրանքը:

Մասնախմբի անդամների առաջարկությունների հիման վրա ընդանրացվեց դասի պլանի կազմման և ներկայացման միասնական ձևաչափ: Միաժամանակ հստակեցվեցին պլանների ներկայացման ժամկետներն ու դրանց պահպանման կարգը:

Լսեցին՝

7. Մ. Հակոբջանյանը ներկայացրեց ուսումնական գործընթացում ամփոփիչ գնահատման ձևերի, մեթոդների և կիրառման հաճախականության վերաբերյալ առաջարկությունները՝ նշելով, որ դրանց ընտրությունը պետք է պայմանավորված լինի գնահատման նպատակներով, առարկայի առանձնահատկություններով և սովորողների ուսումնառության առանձնահատկություններով:

Քննարկման ընթացքում ուսուցիչները ներկայացրին իրենց դասավանդած առարկաների շրջանակում նախատեսվող գնահատման ձևերն ու մեթոդները: Անդրադարձ կատարվեց միավորային և բնութագրող գնահատման կիրառման առանձնահատկություններին՝ հաշվի առնելով տարբեր դասարաններում և առարկաներում դրանց կիրառման նպատակահարմարությունը:

Մասնախմբի անդամների քննարկման արդյունքում համաձայնեցվեցին ամփոփիչ գնահատման կիրառվող ձևերը, մեթոդներն ու հաճախականությունը, ինչպես նաև գնահատման գործընթացի կազմակերպման միասնական մոտեցումները:

Լսելով 2026 թվականի օգոստոսի 26-ի նիստի օրակարգային հարցերի վերաբերյալ զեկուցումները և քննարկելով ներկայացված հարցերը՝ մեթոդական միավորումը

Որոշում է

1. Հաստատել մեթոդական միավորման նիստի օրակարգը՝ բաղկացած 7 հարցից: Նիստի աշխատանքներն իրականացնել հաստատված օրակարգին համապատասխան՝ ապահովելով օրակարգային հարցերի քննարկումն ու ընդունված որոշումների իրականացումը սահմանված ժամկետներում: Որոշումների կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել մեթոդական միավորման ղեկավարին:
2. Մեթոդական միավորման քարտուղար ընտրել Լ. Հովհաննիսյանին: Հանձնարարել քարտուղարին մեթոդական միավորման նիստերի արձանագրությունները կազմել և էլեկտրոնային եղանակով ներկայացնել նիստի անցկացումից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում:
3. Ի գիտություն ընդունել ներկայացված իրավական փաստաթղթերը: Ուսումնական գործընթացը կազմակերպել գործող իրավական ակտերի պահանջներին համապատասխան: Անհրաժեշտության դեպքում կազմակերպել լրացուցիչ խորհրդատվություններ և իրազեկումներ:
4. 2026–2027 ուսումնական տարում իրականացնել փոխադարձ դասալսումներ՝ հետևյալ պարբերականությամբ.
   - **4.1.** Մեթոդական միավորման ղեկավարի կողմից՝ յուրաքանչյուր ուսուցչի մոտ յուրաքանչյուր կիսամյակի ընթացքում առնվազն 1 դասալսում,
   - **4.2.** Փոխադարձ դասալսումներն իրականացնել ըստ անհրաժեշտության ՄՄ նիստում քննարկման հիման վրա:
   - **4.3.** Դասալսումների արձանագրման ձևաչափի և դասալսումների վերաբերյալ առաջարկությունները ներկայացնել մանկավարժական խորհրդի քննարկմանը՝ միասնական մոտեցում ապահովելու համար:
5. Հավանություն տալ ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխմանը՝ ըստ ներկայացված աղյուսակի: Նախնական դասաբաշխման վերաբերյալ մեթոդական միավորման առաջարկությունը ներկայացնել առաջիկա ՄԽ նիստում:
6. Հավանություն տալ դասի պլանի կազմման և ներկայացման միասնական ձևաչափին: Դասի պլանի ձևաչափի օրինակն ու դրա կիրառման վերաբերյալ առաջարկությունը ներկայացնել մանկավարժական խորհրդի քննարկմանը:
7. Մանկավարժական խորհրդի հաստատմանը ներկայացնել ՄՄ անդամ ուսուցիչների կողմից ընտրված ամփոփիչ գնահատման ձևերը, մեթոդները և իրականացման հաճախականությունը՝ դրանք ընտրելիս հաշվի առնելով սովորողների կրթական առանձնահատկությունները, կարողություններն ու կարիքները:

Արվեստ և արհեստ, Ֆիզիկական կրթություն և առողջ, անվտանգ կենսագործունեություն առարկաների առարկայական մասնախմբի ղեկավար՝ ——————————— **Մ. Հակոբջանյան**

Քարտուղար՝ ——————————— **Լ. Հովհաննիսյան**

26.08.2026